

ՀՀ ԲՆԱԴԱՅՊԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Ներկայումս ՀՀ-ում շրջակա միջավայրի պահպանության հիմնախնդիրները առաջնային տեղ են գրավում և ինչպես առանձին հետազոտողների, այնպես էլ ՀՀ կառավարության կողմից արժանանում են մեծ ուշադրության: Հիմնականում շրջակա միջավայրի պահպանության հիմնախնդիրների առաջացման հիմնական մեղավորը տնտեսությունն է: Ընդհանրապես բնօգտագործման տնտեսագիտությունն ունի երկու հիմնախնդիր.

- բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործում,
- շրջակա միջավայրի պահպանություն:

Շուկայական հարաբերությունների անցման գործընթացում երևան եկան մի շարք արմատապես այլ, քիչ ուսումնասիրված բնապահպանական-տնտեսական հիմնախնդիրներ.

- բնօգտագործման ուղղակի կարգավորման և շուկայական մեխանիզմների գույքորոշման,
- բնական հարստության տնտեսական գնահատման,
- բնօգտագործման վճարների արդյունավետության,
- բնապահպանական համակարգերի ստեղծման և այլն:

Յուրաքանչյուր երկրի բնության պահպանության վիճակը մեծ կախվածություն ունի տվյալ երկրի տնտեսության զարգացվածության աստիճանից (տնտեսության կառուցվածքից և կիրառվող տեխնոլոգիաների առանձնահատկություններից), համաշխարհային տնտեսությանն ինտեգրվելու ակտիվությունից և ծագած հիմնախնդիրներին համարժեք բնապահպանական քաղաքականության իրականացումից: Ընդ որում՝ այդ քաղաքականության առավել կարևոր ուղղություններից է բնապահպանական գործունեության կառավարման արդյունավետ տնտեսական մեխանիզմների ներդրումը և կիրառումը:

Ամերիաժեշտ է նշել, որ 1990-ական թվականներին բնական ռեսուրսների բաշխումը բնօգտագործողների միջև իրականացվել է նվազագույն գների հիման վրա, և այդ հանգամանքը բնական ռեսուրսների նկատմամբ ոչ ռացիոնալ վերաբերմունքի հիմնական պատճառներից է: Նման իրավիճակը նպաստել է հասարակության գիտակցության մեջ բնության նկատմամբ սպառողական վերաբերմունքի ձևավորմանը, որը հանգեցրել է բնապահպանական և բնական գործոնների անտեսմանը: Որպես հետևանք, արձանագրվել է շրջակա միջավայրի ինտենսիվ դեգրադացիա, որի մասշտաբները, Հայաստանի Հանրապետության մեծ սակավահող երկրի համար, կրում է ոչ թե տեղական, այլ ռեգիոնալ և ազգային բնույթ: Հայաստանի Հանրապետությունում օգտակար հանածոների արդյունահանումը բաց եղանակով առաջ է բերել մոտ 8000 հա խախտված հողեր, որոնց ժամանակին չվերականգնումը բերում է դրանց հարակից հողերի աղտոտմանը¹: Այդպիսի հողերի 1 հա-ը միջինում աղտոտում է 10 հա նոր հողատարածք՝ առաջացնելով էրոզիայի օջախ: Հատկապես կարելի է առանձնացնել Սյունիքի, Արմավիրի, Արարատի և Կոտայքի մարզերը:

Խախտված հողերի առաջացման հիմնական պատճառը տնտեսության անցումային փուլը և արտաքին տնտեսական կապերի խզումն էր, որոնք հանգեցրեցին գործող հանքավայրերի գործունեության դադարեցմանը և սահմանափակմանը: Առաջ եկան մի շարք լքված հանքավայրեր, որոնք անհրաժեշտ էր գույքագրել:

¹ Հայաստանում անապատացման դեմ պայքարի գործողությունների ազգային ծրագիր, Երևան, 2002, էջ 81, 91:

Միայն սկսած 1992 թվականից Հայաստանի Հանրապետությունում շրջանառության մեջ դրվեց բնօգտագործման վճարը, որի օգնությամբ, ինչպես ենթադրվում էր, հասարակությունը կարող է իրական տնտեսական ցուցանիշներով հաշվառել և հատուցել բնօգտագործման հետևանքով հանքավայրերին հասցված վնասները (սպառված պաշարների մարմանը): Սակայն բնական ռեսուրսների օբյեկտիվ տնտեսական գնահատումը միշտ բախվում է բազում բարդ հարցերի հետ: Այսպես օրինակ՝ բնական ռեսուրսների որոշ առանձին տեսակներ, որոնք գտնվում են միևնույն տարածքում, սովորաբար առաջացնում են ըստ ներքին կառուցվածքի բարդ, բայց միասնական բնական օբյեկտ, և դրանք գրեթե միշտ սերտ փոխկապակցված են միմյանց հետ:

Բացի այդ, միևնույն տիպի բնական ռեսուրսը կարող է ներքաշվել բնօգտագործման գործընթացին տարբեր եղանակներով, ինչպես ըստ դրա օգտագործման ուղղության (բացահանք), այնպես էլ ըստ մշակման ինտենսիվության (խորության): Այս երկու դեպքում էլ հասարակության առջև խնդիր է առաջանում ոչ միայն տնտեսական տեսանկյունից շահավետ տարբերակի ընտրության, այլ նաև դրանց օպտիմալացման՝ բնապահպանական համալիր գործոնների հաշվառմամբ:

Բնօգտագործման պրակտիկայում այս հիմնախնդրի տնտեսագիտական մասը սովորաբար լուծվում է համապատասխան եկամուտների և ծախսումների (զեղչվորման հաշվառումով) համադրման միջոցով, իսկ բնապահպանական մասը, տվյալ դեպքում ունենալով չափազանց կարևոր դեր, հանդիպում է լուրջ բարդությունների, որոնք կապված են բնական ռեսուրսների ոչ սովորական գործառնությունների (բնապահպան, ռեկրեացիոն, էսթետիկ և այլն) տնտեսագիտական գնահատման հետ: Այստեղից հետևում է, որ բնական ռեսուրսների ներկայիս գները զգալիորեն նվազեցված են և չեն համապատասխանում հասարակական-անհրաժեշտ իրական ծախսերին, քանի որ հիմնված չեն բնապահպանական ծախսերի վրա:

Այսպիսով, հասարակությունը բնապահպանական հիմնախնդիրների կրճատման համար անհրաժեշտ լծակները կարող է ձեռք բերել բնական ռեսուրսների իրական տնտեսական ցուցանիշներով՝ միայն դրանց հասարակական օգտավետության օբյեկտիվ գնահատումից հետո:

Ընդ որում՝ որպես բնապահպանական գործունեության կարգավորման մեթոդաբանական մոտեցումների ընտրման հիմք պետք է հանդիսանան բնական ռեսուրսների տնտեսական գնահատման մեթոդները, բնապահպանական միջոցառումների մշակման և շահագործման ծախսերի գնահատականը, ինչպես նաև շրջակա միջավայրին և մարդկանց առողջությանը հասցված բնապահպանական վնասի գնահատականը:

Սովորաբար շրջակա բնական միջավայրը այնպես է ձևավորված, որ մի քանի տեսակի բնական ռեսուրսներ հանդես են գալիս միևնույն տարածքի վրա, այսպես օրինակ. անտառը, կենսական ռեսուրսները, ռեկրեացիոն գոտիները, ջրավազանները, ընդերքի հարստությունը (երկրի մակերևութին մոտ տեղադրված):

Ընդերքի հարստության այն մասը, որը ենթակա է յուրացնել բաց մշակման եղանակով, առաջ է բերում որոշակի հողատարածքների խախտումներ, այսինքն, բնական ռեսուրսներից մեկը օգտագործելուց հասարակությունը կարող է կորցնել և հաճախ կորցնում է մեկ կամ մի քանի այլ բնական ռեսուրսներ, ասենք անտառի մի մասը, գյուղատնտեսական հողակտորները և այլն (ինչպես, օրինակ, դա Թեղուտի հանքավայրի շահագործման հետ է կապված, երբ հանքը բացելու ժամանակ անհրաժեշտ է հատել անտառը):

Պետությունը, հանդիսանալով բնական ռեսուրսների սեփականատերը, ելնելով երկրի և հասարակության շահերից, պետք է որոշում կայացնի բնական ռեսուրսների շահագործման վերաբերյալ, քանի որ քիչ են դեպքերը, երբ հնարավոր է յուրացնել ընդերքի հարստությունը առանց խախտելու երկրի համապատասխան մակերևույթը: Այսպիսի ոչ պարզ որոշում կայացնելու համար նախ և առաջ կառավարությունը պետք է հստակ պատկերացնի այդ ռեսուրսներից

յուրաքանչյուրի գնահատականը, այսինքն հասարակությունը պետք է արժեքային արտահայտությամբ իմանա, թե ի՞նչ է նա կորցնում, կամ ձեռք բերում այս կամ այն բնական ռեսուրսը յուրացնելիս, բացառությամբ այն ռեսուրսների, որոնք չունեն արժեքային արտահայտություն (օրինակ օդը): Չնայած նրան, որ անտառի արժեքը հնարավոր է բավականին հստակ հաշվել, գիտական աշխատություններում հիմնավորվում է, որ անտառը Հայաստանի Հանրապետության մեծ սակավատեսակ երկրում գին չունեցող հարստություն է, քանի որ այն ներկայացնում է ոչ միայն փայտանյութի արժեքը, այլ նաև ունի բնապահպանական հավասարակշռության և հանրության գոյատևման նշանակություն: Առանձնացնել է պետք նաև ջրային ավազանները, մասնավորապես Սևանի ավազանը, որը հանրապետության մարդկային ռեսուրսների գոյատևման երաշխիքն է: Այն, ինչ տեղի է ունենում այժմ, արդյունք է բնական ռեսուրսների գերշահագործման, բնապահպանական թույլ հաստատությունների և վարչական համակարգերի, բնապահպանական թույլ օրենսդրական դաշտի առկայության և բնօգտագործման ու բնապահպանության համակարգված կառավարման բացակայության:

Ուստի, անտառների ու ջրային ավազանների և, ընդհանրապես, բնության պահպանությունը Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից գերակայող ուղղություն պետք է հանդիսանա: Հարց է առաջանում՝ իսկ ի՞նչ տեղ են զբաղեցնում ընդերքի հարստության օգտագործման և շրջակա միջավայրի պահպանության հիմնախնդիրները ՀՀ տնտեսական համակարգում և արդյո՞ք պատշաճ ուշադրության են արժանանում ՀՀ կառավարության կողմից:

Նախկին Խորհրդային Միության տնտեսական համակարգի կազմալուծման հետևանքով Հայաստանի Երրորդ Հանրապետությունը հայտնվեց տնտեսական, սոցիալական և աշխարհաքաղաքական աննպաստ պայմանների պատճառով ծայրահեղորեն սրված հիմնախնդիրների դեմ հանդիման: Գտնվելով հարևան երկրների կողմից շրջափակման մեջ՝ Հայաստանի տնտեսության զարգացման համար ավելի ռազմավարական նշանակություն ստացան տեղական հանքային հումքի օգտագործման և վերամշակման հիմնահարցերը: Շրջափակման պատճառով որոշակի ռեսուրսների ներմուծումը դարձավ անհնարին: Առաջ եկավ տեղական հանքային հումքի վերագնահատման և որոշ բնական ռեսուրսների գծով որոնողահետախուզական աշխատանքների անցկացման անհրաժեշտությունը:

Օգտակար հանածոների բաց մշակման եղանակով արդյունահանումը առաջացնում է լանդշաֆտի խզումներ և հողակտորների խախտում, որն իրենից ներկայացնում է բնապահպանական վնաս: Այսինքն՝ հասարակությունը կանգնում է երկրնտրանքի առջև. մի կողմից՝ հասարակության պահանջմունքների բավարարման համար անհրաժեշտ հումքի ստացման, մյուս կողմից՝ բնապահպանական վնասի առումով:

Ըստ ազդեցության տարբերվում են անմիջական և միջնորդական վնասներ, որոնք կարող են ունենալ բնական, բարոյական և սոցիալական արտահայտություն: Բնապահպանական վնասը կարող է ունենալ ակնհայտ, թաքնված, ինչպես նաև ընթացիկ և կանխատեսումային բնույթ: Բնապահպանական վնասը կարող է բաժանվել առաջնային և երկրորդական ազդեցության վնասների¹:

Բնապահպանական վնասի տնտեսական գնահատականը որոշվում է բնօգտագործման արդյունքում շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխման համար անհրաժեշտ ծախսերի և հասարակական պահանջմունքների համադրումով: Օրինակ՝ օգտակար հանածոյի հանքավայրի հյուծումից առաջացող վնասը որոշվում է դրա հաշվեկշռային պաշարների արժեքով և մնամատիպ հանքավայրերի յուրացման համար անհրաժեշտ ծախսերով: Ըստ իրենց բովանդակության՝ շրջակա միջավայրին և մարդկանց առողջությանը հասցված վնասի հետևանքով առաջացած լրացուցիչ ծախսերը կարող են բաժանվել՝ ծախսերի, որոնք պայմա-

¹ Демина Т. А. Экология природопользование, охрана окружающей среды. Учебное пособие, М., 1999 г. с. 73.

նավորված են արդեն հասցված վնասով, այսինքն իրական բնապահպանական վնասով և ծախսերի, որոնք կապված են հնարավոր բնապահպանական վնասի կանխման բնապահպանական միջոցառումների իրականացման հետ: Այս բոլոր նշված ծախսերի գումարը սահմանում է բնապահպանական վնասի իրական և հնարավոր տնտեսական գնահատականը: Մասնագիտական գրականությունում շրջակա միջավայրին հասցվող բնապահպանական վնասը և համապատասխան ֆինանսական ծախսերը կապվում են բնապահպանական ռիսկի հետ:

Բնապահպանական վնասը արտահայտվում է ազդեցության հետևյալ ձևերով.

- տնտեսական գործունեության փուլում օգտագործվող բնական ռեսուրսներում վնասակար բաղադրիչների պարունակության մեծացում,
- գյուղատնտեսական հողատարածքների բերքատվության նվազեցում,
- շրջակա բնական միջավայրում վնասակար տարրերի համակենտրոնացման մեծացում,
- կենսագործունեության որակի վատթարացում,
- ֆաունայի և ֆլորայի առանձին ներկայացուցիչների անհետացում,
- էկո-երկրաբանական պայմանների խախտում և այլն:

Բնօգտագործման կարևորագույն հիմնախնդիրներից մեկը բնապահպանական վնասի նվազեցման ռազմավարության մշակումն է: Այս նպատակի համար կամ կիրառվում են տվյալ ծառայությունների և ապրանքների շուկայական գները կամ էլ՝ անմիջական ծախսերը:

Շրջակա միջավայրի վրա ունեցած բնապահպանական վնասի ազդեցության գնահատումը հիմնվում է հետևյալ ուսումնասիրությունների վրա.

- արտադրողականության կամ արդյունավետության փոփոխության,
- կյանքի որակի վատթարացման,
- գույքի օգտագործման ժամկետի նվազման ,
- այլընտրանքային արժեքի:

Բնապահպանական վնասի արժեքային գնահատման և հաշվառման համար կիրառվում են հետևյալ մեթոդները¹.

- Ուղղակի հաշվառում, որն անմիջական հետազոտվող օբյեկտի բնապահպանական վնասի տնտեսական գնահատականն է՝ դրանց բաղկացուցիչների արժեքային արտահատությունը:
- Անուղղակի (եմպիրիկ) մեթոդ, որը հիմնված է նախկինում հաստատված օրինաչափություններից անցում կոնկրետ հետազոտվող օբյեկտի վրա և ենթադրում է նորմատիվային ցուցանիշների համակարգի օգտագործում, որոնք սահմանում են բացասական հետևանքների կախվածությունը հիմնական վնաս ձևավորող գործոններից:

Առաջին մեթոդաբանական մոտեցման կիրառման դեպքում առանձնացվում են վնասի բաղկացուցիչների բացահայտման 3 մեթոդ. վերահսկող (ստուգող) շրջանների, վիճակագրական կախվածության և կոմբինացված:

Վերահսկող շրջանների մեթոդը հիմնված է պայմանական մաքուր (ֆոնային, ստուգող) և աղտոտված շրջանների ցուցանիշների համեմատման հիման վրա:

Վիճակագրական կախվածության մեթոդը հիմնված է մաթեմատիկական վիճակագրության մեթոդների կիրառման վրա՝ նպատակ ունենալով հաստատել հետազոտվող հատկանիշների փոփոխման կախվածությունը ազդող գործոնների մեծությունից:

Կոմբինացված մեթոդը ենթադրում է այս երկու մեթոդների համատեղ կիրառումը:

Հանքավայրերի յուրացումից առաջ եկող բնապահպանական վնասը Հայաստանի Հանրապետությունում փոխհատուցում է ընդերք օգտագործող՝ կատարելով շրջակա բնական միջավայրի բացասական ազդեցության կանխարգելիչ միջոցառումներ: Սակայն միշտ չէ, որ

¹ Бобров А. Л., Эколого-экономическая устойчивость регионов России, М., 1999 г. с. 54-58.

պետական համապատասխան լծակներն ի վիճակի են վերահսկել բնապահպանական աշխատանքների պատշաճ ու ժամանակին կատարումը և, իհարկե, միշտ կգտնվեն անբարեխիղճ ընդերք օգտագործողներ, որոնք կթերանան այդ գործում՝ կապիտալ և շահագործական ծախսերը նվազեցնելու համար:

Հնարավոր է կիրառել խոշոր տուգանքներ բնապահպանական միջոցառումների խախտման համար, սակայն կարծում ենք, որ դա կարող է հանգեցնել ընդերքօգտագործման պայմանագրի վաղաժամկետ լուծարմանը:

Այս խնդրի լուծման համար կարևոր է շրջակա բնական միջավայրի պահպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպությունների և իհարկե պետական համապատասխան ապարատի համատեղ գործողությունների ծրագրի մշակումը, որի արդյունքում ձեռք կբերվեն խնդրի կարգավորման անհրաժեշտ լծակները:

Հնարավոր է կիրառել որոշակի հարկային արտոնություններ ժամանակակից տեխնոլոգիաների և տեխնիկայի կիրառման պայմանով, որը կնպաստի անթափոն արտադրության ծավալմանը, բնապահպանությանը, ինչպես նաև կնվազեցնի արտադրական ծախսերը:

Հանքօգտագործման գործընթացում վճռորոշը հանքավայրերի գնահատման փուլն է, որը պայմանավորված է մի շարք հանգամանքներով: Հանքավայրերի գնահատման ժամանակ հարկավոր է գնահատման մեջ ներառել նաև շրջակա միջավայրի պահպանության ծախսերը:

Շրջակա միջավայրի պահպանության հիմնախնդիրն իր հերթին նպաստում է տնտեսական ակտիվության նոր որակի ապահովմանը, նպաստում է լրացուցիչ աշխատատեղերի ստեղծմանը, հատկապես, բնապահպանական ուղղվածություն ունեցող ձեռնարկատիրական գործունեության զարգացմանը: Տնտեսության զարգացումը և բնապահպանությունը փոխկապակցված են, և դրանց համաչափության ապահովումը գնահատվում է որպես հասարակական բարեկեցության կարևոր երաշխիք: Պետության հետագա սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակը և հեռանկարները զգալի չափով պայմանավորված են նրա բնառեսուրսային ներուժի իրական պատկերից, նրանց օպտիմալ օգտագործումից, պահպանումից, վերարտադրումից և շրջակա միջավայրի պահպանությունից:

Յուրաքանչյուր երկիր ինքն է ընտրում բնօգտագործման և բնապահպանության իր ազգային ռազմավարությունը՝ հաշվի առնելով երկրի միջազգային պարտավորությունները և պայմանագրերը: Եվ դրա նպատակը պետք է լինի «բնություն-հասարակություն-արտադրություն» փոխհարաբերության այնպիսի համակարգի ստեղծումը, որը կերաշխավորի տնտեսական, սոցիալական, բնապահպանական հիմնախնդիրների լուծումը, կայուն տնտեսական աճը, անհատի զարգացումը և հետագա սերունդների գոյատևումը: